զրկանաց · պատուիրել արանց կուսակալին և այլ գործավարաց՝ չլինել ձեռներեց յայնպիսի գործս և հատուցանել չարիս Հայոց · 'ի բաց մերժել զայնպիսի կամակորս · եւ յականէ յանուանէ ծանուցանել 'ի Դուռն , որք ոչն կամին հնազանդիլ օրինաց և հրամանի Արքային , զի մի հարկ լիցի կրկնելոյ զհրամանն , ՌՂԷ (1648) ։

Աստուածատուր Պատրիարք արար եւ նորոգութիւնս ինչ 'ի վանս Ս · Յակոբայ , սակայն այս շինութիւնք տեւեցին երկար և կրեցին միաբանք վիշտս և նեղութիւնս ոչ սակաւ · որպէս յայտ առնեն բազմաթիւ դատաստանական գրեանք , զորոց զանց արարաք մի առ մի կրկնել աստանօր , բաց 'ի գրոյն կուսակալին Դամասկոսի ։

Կուսակալն Մուստաֆայ Փաշայ՝ լուեալ էր զնորոգութեանց վանօրէիցն Հայոց , որոց վասն գրեաց թուղթ առ դատաւորն Երուսաղէմի , և առաքեաց զայն 'ի ձեռն պաշտօնէին իւրոյ Ապտրրահման կոչեցելոյ , հարցանել զորպիսութենէ շինուածոց ։ Ի հասանել առնն 'ի քաղաքն սուրբ · կազմեցաւ ժողով մեծ , ուր էին դատաւորն՝ քաղաքապետն Մէհէմմէտ Փաշայ, դասք գիտնականաց՝ և այլք , կոչեցան Յակոբ և Տօնիկ 'ի վանացն Հայոց , ընթերցաւ յատենի նամակ Կուսակալին՝ ուր ասէր , « Հայք բնակեալք յԵրուսաղէմ, լուաք թէ քակեալ են 'ի հիմանց զվանքն կոչեցեալ Հապս էլ Մէսիհ , (բանտն Քրիստոսի) արտաքոյ քաղաքին՝ մերձ 'ի շիրիմն Մարգարէին Դաւթի , եւ նորոգ շինեալ զայն · քննութիւն արարեալ զայնմանէ առաջի պաշտօնէին մերոյ · գրեսջիք ըստ օրինի զարդիւնս նորին ։ Հրամայեաց դատաւորն Հայոց պատմել զիրս նորոգութեանց ։ Եւ նոքա ասեն՝ Հայք ոչ են քակեալ և նորոգ շինեալ զվանս Սուրբ Փրկչի , այլ միայն առաջին Պատրիարքունք նորոգեալ են զայն հրամանաւ դատաւորաց քաղաքիս , որպէս եւ մեք նախ քան զերկուս ամս նորոգեցաք զպարիսպ նորին · զի վտանգ մեծ էր անկանիլ քարանց 'ի վերայ այլազգեաց Սիոնի , ըստ քննութեան և հրամանի դատաւորին նորոգեցաք զայն , ըստ մտաց Արքունի հրովարտակին ։ Յետ ընթեռնլոյ զգրեանս չոքան բազմութեամբ 'ի վանս Սուրբ Փրկչի , և 'ի քննութեան պահու գտին միայն նորոգեալ հարաւային պարիսպն , զի 'ի տեղի հնացեալ եւ անկեալ